«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ինչպես ուսուցանել բանավոր խոսքը,որպե հաղորդակցման միջոց:

. Մենախոսություն
. Երկխոսություն
. Դերային խաղ

Հետազոտող ուսուցիչ՝ Լուիզա Գևորգի Պետրոսյան

Դպրոց՝«Գուսանագյուղի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածություն----------էջ 3

2. Գլուխ 1----------էջ 4-9

3. Գլուխ 2----------էջ 10-16

4. Եզրակացություն----------էջ 17

5. Օգտագործված գրականության ցանկ----------էջ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքը՝ որպես հաղորդակցման միջոց մտածողության արգասիք է: Դրա զարգացման, շրջապատող աշխարհի մասին երեխաների պատկերացումների ընդլայման, բառապաշարի հարստացման համար պետք է ստեղծել երեխայի համար զարգացնող միջավայր, խրախուսել երեխայի հաղորդակցման փորձերը, ընդգրկել երեխային զրույցի, երկխոսության մեջ:

Խոսքը երևան է գալիս մարդու՝ այլ մարդկանց հետ հաղորդակցվելու պահանջմունքից: Այդ պատճառով երեխայի ներառումը սոցիալական միջավայրի մեջ և նրա սոցիալական կապերի պլանավորված ընկալումը համարվում են նրա խոսքի զարգացման հիմնական պայմաններից մեկը, երեխաների բանավոր խոսքի զարգացումն իրականանում է գործունեության ընթացքում, և խոսքի զարգացման շարժիչ ուժը համարվում է հաղորդակցման անհրաժեշտությունը: Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցման ունակությունները, զարգացնում է նրա բանավոր խոսքը:

ԳԼՈՒԽ 1

Լեզվի մասին խոսելիս Խ.Աբովյանն ասել է .«Լեզուն անշունչ, ամենաազնիվ գործիքն է, որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է, արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ՛ անհատը ոչ՛ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ իր մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին»:

Լեզվի հմայքն զգալու համար խիստ կարևոր է արտահայտիչ ընթերցանությունը: Այս ուղղությամբ երեխաներին պետք է վարժեցնել դեռ վաղ տարիքում:

Հայտնի է, որ սովորողը ամենագեղեցիկ պատկերներին անգամ կմնա անհաղորդ և իր ընթեցանությամբ չի հուզի ոչ՛ իրեն, ոչ՛ լսողին, եթե կարդում է միապաղաղ, ոչինչ չասող ձայնով: Չի հարստանա նրա բառապաշարը, չի զարգանա բանավոր խոսքը, քանի դեռ ինքը չի թափանցել ուսուցվող բնագրի բովանդակության մեջ:

Տառուսուցման հետ միասին պետք է ուշադրությունը կենտրոնացնել նաև բանավոր խոսքի զարգացմանն ուղղված բազմազան աշխատանքներին՝ զուգակցելով արտահայտիչ ընթերցանության հետ: Հայ մեծանուն մանկավարժ Ա.Ղարիբյանն ասել է. «Գրաճանաչությունն ուսուցման նախնական շրջանն է, այդ շրջանում շատ է հոգ տարվում ծանոթացնելու տառերին, քան թե կարդալու տեխնիկայի տիրապետմանը, մինչ դեռ հենց այդ շրջանում կարդալու տեխնիկայի մշակման սկիզբ է դրվում, ուստի պետք է հավասարաչափ հոգ տանել թե՛ տառուսուցմանը, թե՛ կարդալու տեխնիկային»:

Մշակելով երեխայի արտահայտիչ ընթերցանությունը՝ նրան հավաստիացնում ենք, որ գեղեցիկ ընթերցելն արվեստ է, ինչպես գեղեցիկ երգը, որը հիացնում է մարդկանց և լսվում հաճույքով: Այն ձևավորում է գրական ճաշակ, բարձրացնում լեզվական մշակույթը, ազդում սրտի և զգացմունքների վրա, նպաստում մտածողության զարգացմանը, հարստացնում գիտելիքները: Ինչպես ասել է Ղ.Աղայանը. «...Ցուրաքանչյուր շեշտ և կետ զանգակի պես հնչում են երեխայի ականջին, հոգեբուխ երգի նման թափանցում է մարդկային հոգու խորքերը, թրթռացնում բոլոր նուրբ լարերը նրա մոտ»:

Ճիշտ է նկատել մեծ մանկավարժը, տարրական դասարաններում արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում ընկած է կետադրական նշանների ըմբռնումը և ընթեցանության գիտակցականությունը: Աշակերտը պետք է զգա առոգանության ու թրոհության նշանները, ինչպես նաև բնագրի բովանդակությունից բխող տեմպի ու ձայնի էլեմենտների փոփոխությունը:

Առաքել Բահաթրյանը, խոսելով արտահայտիչ ընթերցանության մասին, նշել է. «Բացի աչքից ու բերանից՝ ընթերցանության ժամանակ հոգին նույնպես պիտի գործողության մղվի: Մարդն ընթերցելիս պիտի մտածի, ընթերցածը պիտի իր մտքի ու հոգու սեփականությունը դարձնի, պիտի հասկանա և , եթե հասկանում է, նա այդ պիտի ապացուցե յուր ընթերցանության գեղեցկությամբ»:

Աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու և դրանք աշխատանքի ընթացքում խելամիտ ձևով օգտագործելու հարցը և՛ անցյալում, և՛ առավել ևս հիմա մանկավարժների կողմից լուրջ ուշադրության առարկա է դարձել: Այն իր դրական արդյունքն է տվել ինչպես դասի արդյունավետության բարձրացման, այնպես էլ խոսքի և մտածողության զարգացման և առաջընթացի ապահովման իմաստով:

Մեր ժամանակի մեծ մանկավարժ Սուխոմլինսկին երեխաների մեջ բանաստեղծական կարողությունների ձևավորումը համարում էր ոչ միայն խոսքի և մտածողության զարգացման, այլև գեղարվեստական դաստիարակության, կյանքը սիրելու միջոց: Նա ասել է ”Լեզուն մտքի նյութական արտահայտությունն է, և երեխան դա կիմանա այն ժամանակ, երբ իմաստի հետ միասին ընկալի վառ հուզական երանգավորումը, բառի երաժշտության կենդանի թրթիռը: Առանց բառի գեղեցկությունն զգալու երեխայի համար անհասկանալի են նրա իմաստի նվիրական սահմանագծերը: Իսկ գեղեցկության զգացումն անիմաստ է առանց երևակայության և երեխաների անձնական մասնակցության գեղագիտական ստեղծագործությանը,,:

Մանկական բանաբվեստի օգտագործումը դասի գործընթացում բարձրացնում է աշակերտների հետաքրքրությունը դասի նկատմամբ, նպաստում նրանց ակտիվացմանը, բառապաշարի հարստացմանը և գրավոր ու բանավոր խոսքի զարգացմանը:

Խոսքը դրսևորվում է երկու ձևով՝ բանավոր և գրավոր: Դրանք փոխադարձ կապակցության մեջ են և ունեն իրենց առանձնահատկությունները: Բանավոր խոսքն ուղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում: Այն զրուցակիցների միջև ստեղծում է կենդանի հաղորդակցական կապ, որի բովանդակությունը պայմանավորված է զրուցակիցների շոշափած հարցերի իմաստով, խոսքային պայմաններով, հաղորդակցման իրավիճակով: Խոսողն ազատ է բառերի ընտրության մեջ, կարող է թերի արտահայտել որոշ մտքեր, ինչը չի խանգարում խոսքի հասկացմանը: Բանավոր խոսքի արտահայտչամիջոցներն ավելի հարուստ են՝ ելևէջավորում, հնչերանգ, ձայնի բարձրացում և իջեցում, դադարառություն, շեշտադրություն, դիմախաղ, շարժուձևեր և այլն:

Աշակերտի խոսքի զարգացման աշխատանքները հիշտ կազմակերպելու առումով էական նշանակություն ունեն համապատասխան մեթոդի ընտրությունը և տեղին օգտագործումը: ՈԻսուցման մեթոդի ընտրությունը պայմանավորված է թեմայի բովանդակությամբ, դասի նպատակով, ուսուցչի հնարավորությամբ:

Խոսքի զարգացման մեթոդները բազմաան են, դրանցից կարելի է նշել դիդակտիկայում երաշխավորված և պրակտիկայում ճանաչում գտած հետևյալ մեթոդները:

<u>1. Բացատրական-ցուցադրական</u> մեթոդը նպաստում է աշակերտների գիտելիքների ձեռքբերմանը և մարդկության կուտակած փորձի յուրացմանը: Այն իրականացնում է բանավոր և գրավոր խոսքի, հեռուստատեսության, կինոյի, համակարգչի, դիաֆիլմերի և զննական այլ միջոցներով: Դրա

կիրառման եղանակներն են՝ պատմումը, բացատրումը, զրույցը, դասախոսությունը, գրքի ընթերցումը, նկարների, գծապատկերների, կինոնկարների ցուցադրումը, համակարգիչը և այլն:

2. Վերարտադրական մեթոդին բնորոշ է տեսածի, լսածի, սովորածի վերարտադրումը, այսինքն աշակերտի պատմումը, ընթերցումը, վարժությունների կատարումը՝ ուսուցչի անմիջական միջամտությամբ, հանձնարարություններով, ցուցումներով, խթանիչ, դրդիչ գործունեությամբ, հարցերի ու առաջադրանքների հանձնարարությամբ:

3. Խնդրահարույց շարադրանքի մեթոդի էությունն այն է, որ ուսուցիչն ինքն է պրոբլեմներ առաջադրում աշակերտներին՝ խթանելով նրանց ինքնուրույնությունը: Շարադրանքի ընթացքում նա տալիս է գիտական և համոզիչ օրինակներ, իսկ աշակերտները մտապահում են խնդրի լուծման հաջորդական փուլերը և պրոբլեմի ամբողջական լուծումը: Այս մեթոդով գիտելիքների յուրացումը կատարվում է երկու ճանապարհով՝ վերարտադրման և ստեղծագործական: Վերջինս ընթանում է մտավոր—զանազան գործողությունների միջոցով՝ նպաստելով աշակերտի տրամաբանական մտածողության զարգացմանը և ստեղծագործական ինքնուրույնությանը:

4. Մասնավոր որոնողական կամ էվրիստիկական մեթոդն աշակերտին օգնում է որոնել, գտնել, գտնել երևույթների նմանություններն ու տարբերությունները, գիտակցել սխալը և գտնել դրանց վերացման միջոցները:

5. Հետազոտական մեթոդի համար էական են փաստերի դիտումը, ուսումնասիրումը, երևույթների և օրինաչափությունների բացահայտումը՝ հաշվի առնելով աշակերտի մտավոր ընդունակությունը և հետաքրքրությունը տվյալ նյութի հանդեպ: Այս ակտիվ ու արդյունավետ մեթոդը լայն կիրառություն ունի տարրական դասարաններում:

6. Միջնորդավորված մեթոդները կիրառվում են այնպիսի օբյեկտներին և երևույթներին ծանոթանալիս, որոնք հնարավոր չէ անմիջականորեն ուսումնասիրել:

7. Գործնական մեթոդները նպատակաուղղված են խոսքային ունակություններ և կարողությունների գործնական կիրառմանը և կատարելագործմանը: Դրանց թվին են պատկանում տարաբնույթ խոսքային վարժությունները, իրադարձային, դիդակտիկ և շարժման խաղերը, խաղ-բեմականացումները և այլն:

Խոսքի զարգացման նպատակով օգտագործվում են բազմաթեվ մեթոդներ՝ դրանք զուգորդելով և համակցելով իրար:

Բանավոր խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման նպատակին է ծառայում հոմանիշների ուսուցումը:

Բառային աշխատանքը ևս նպաստում է բանավոր խոսքի ու ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Առանձնացնում են բառային աշխատանքի տարբեր ձևեր և հնարներ՝ գրականության ընթերցում, անգիր սովորել, վերապատմումներ, առարկաների, խաղալիքների ցուցադրման զուգակցում պատմումին, բառախաղեր, դիդակտիկ խաղեր և այլն: Բառի հիմնավոր յուրացում ասելով հասկանում ենք այն, ինչը սովորողին հնարավորություն է տալիս.

ա) ճիշտ կարդալ, արտասանել և գրել այն,

բ) կարողանալ կազմել նրա բերականական ձևերը,

գ) հասկանալ բառը համատեքստում՝ կարդալիս կամ լսելիս,

դ) կարողանալ բառը կիրառել ուսումնասիրած թեմայի վերաբերյալ հարցեր և պատասխաններ կազմելիս:

Առաջարկվում են բառապաշարի հարստացմանն ու ամրապնդմանը նպաստող ուսումնական գործունեության մի քանի տեսակներ.

– բացահայտել անծանոթ բառերի, արտահայտությունների իմաստը, կազմել հոմանիշների, հականիշների, դարձվածքների բառախմբեր, յուրացված բառերն օգտագործել գրավոր և բանավոր խոսքում.

– կիրառել անծանոթ բառերի իմաստը՝

. ծանոթ բառակազմական բաղադրիչների հիման վրա.

. նախադասության ընդհանուր իմաստի(համատեքստի) հիման վրա.

. այլ լեզուների նույնանիշ բառերի հետ նմանության հիման վրա (միջազգային բառեր):

Բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև աշակերտների երևակայությունն ու ստեղծագործական միտքը խթանող աշխատանքները:

Բանավոր խեսքի զարգացման ակտիվ միջոց է խոսքի, երաժշտության և կերպարվեստի նմուշների համակցված օգտագործումը:

Առաջարկվում է խոսքի զարգացմանն ուղղված հետևյալ աշխատանքները.

– օգտվել հաղորդակցման տարբեր միջոցներից, մտքեր փոխանակել, կարծիք հայտնել, վերլուծել, նկարագրել, բնութագրել, հաղորդել

. <u>նկարագրել</u>

Նկարագրել որևէ առարկա կամ երևույթ՝ պահպանելով տրված որոշակի կառույցը, կաղապարը կամ հաջորդականությունը. (օրինակ՝ նկարագրել առարկան հետևյալ հաջորդականությամբ՝ անվանել առարկան, նրա հատկանիշները, առանձնահատկությունները, բնորոշ գործողությունները և այլն):

. <u>ներկայացնել, հաղորդել</u>

Աշակերտներին առաջարկվում է ներկայացնել, հաղորդել կարդացած, լսած պատմության կամ տեսած կինոնկարի հիմնական իրադարձությունները ու փաս–տերը տրամաբանական հերթականությամբ:

. <u>համակցել, համադրել</u>

Աշակերտներին առաջարկվում է համեմատել և ճիշտ համակցել ու համադրել,

– տեքստի տարբեր մասերն ու համապատասխան նկարները, գծանկարները.

– կիսված նախադասությունների սկիզբն ու ավարտը.

– տեքստի տարբեր մասերն ու համապատասխան հարցերը:

. համեմատել

– իրար հակասող մտքեր կամ հակադիր տեսակետներ պարունակող երկու տեքստ.

– միևնույն նյութի մասին երկու տարբեր տեսակետները:

. խճանկար

– տրված խառը նախադասություններից կառուցել այս կամ այն թեմային առնչվող կապակցված խոսք.

– տրված խառը նկարները դասավորել տրամաբանական հերթականությամբ և պատմություն հորինել:

. Աշխատանք նկարների շուրջ

– նկարագրել նկարը.

– այուժետային նկարների շարքի համար հորինել և բանավոր կամ գրավոր ներկայացնել մակագրություն–մեկնաբանություններ.

– խոսել նկարի բովանդակության մասին.

– վերականգնել խառնված հերթականությունը.

– հիմնավորել նկարի բովանդակության վրա՝ երևակայել, ենթադրել այն, ինչ պատկերված չէ նկարում.

– պատմության նկարազարդված առանձին դրվագների հիման վրա վերականգնել ամբողջական պատմությունը կամ կատկերը.

– նկարների հիման կառուցել պատմության շարունակությունը:

ԳԼՈՒԽ 2

Հաղորդակցական կարողությունների արդյունավետ ձևավորմանը նպաստում են երկխոսությունները, դերային խաղերը, մենախոսությունները:

Մենախոսություն

Մենախոսությունը ենթադրում է մի շարք հիմնական կարողություններ.

. նկարագրել անձերին, իրար, երևույթներ, իրադարձություններ.

. պատմել դեպքերի, իրադարձությունների, իր հույզերի կամ զգացմունքների մասին.

. տեղեկացնել, նորություններ հաղորդել,

. բնութագրել, դատողություններ անել, կարծիք հայտնել այս կամ այն երևույթի, հարցի, իրադարձության մասին, հիմնավորել իր կարծիքը և այլն.

. ինչպես նաև մենախոսության յուրաքանչյուր տեսակի համար ճիշտ ընտրել և կիրառել խոսքի տրամաբանական-կառուցվածքային համապատասխան սխեման և տվյալ ասույթի հնչերանգային-ռեթմային պատկերը:

Սովորողները պետք է կարողանան յուրացրած բառապաշարով խոսքային նմուշների հիման վրա զարգացնել հանպատրաստից խոսքի կարողությունները:

Մենախոսության համար կարևոր են նկարագրությունը, պատմելը, դատելն ու կշռադատելը, ապացուցելն ու հիմնավորելը: Օգտագործելով յուրացված բառապաշարը, քերականական կառուցվածքներն ու խոսքային նմուշները՝ սովորողները պետք է կարողանան տրամաբանորեն խոսել, հուզական և գնահատող դատողություններ անել, հիմնավորել ասվածը, արտահայտել անձնական վերաբերմունքը:

Դասավանդման նպատակն է նաև սովորողների մոտ ձևավորել խոսքային նմուշների գործածման կարողություններ տիպական իրավիճակներում և զարգացնել հանպատրաստից խոսք կազմելու հմտությունները:

<u>Երկխոսություն</u>

Երկխոսությունը ենթադրում է առնվազն հետևյալ հիմնական կարողությունները.

. շփման, հաղորդակցման կանոնների պահպանում՝ ըստ երկխոսության կոնկրետ տեսակի,

. երկխոսության ընթացքում լեզվական և արտալեզվական (դիմախաղ, շարժումներ) միջոցների կիրառում՝ կոնկրետ իրադրությանը (պաշտոնական/ոչ պաշտոնական) և զրուցակցին համապատասխան,

. երկխոսության ընթացքում ռեպլիկների, լեզվական միջոցների՝ բառերի, բառային և դարձվածաբանական միավորների, քերականական կառուցվածքների ճիշտ ընտրություն:

Կարելի է առաջարկել <u>անավարտ երկխոսություններ</u>, որոնք պետք է ավարտել՝ լրացնելով այն խոսքային նմուշներով:

– Երկխոսությունների յուրաքանչյուր հաջորդ հարցը կազմվում է նախորդ հարցին տրված պատասխանի հիման վրա:

– <u>ՈՒղղորդված երկխոսություն</u>. ՈՒսուցիչը տալիս է երկխոսության ընդհանուր ուրվագիծը, աշակերտներն ազատ են բառերի և արտահայտությունների ընտրության մեջ (օրինակ՝ հանպատրաստից

երկխոսություն վարել, ասենք՝ տանտեր և հյուր, բժիշկ և հիվանդ, զբոսաշրջիկ և տեղացի, ուսուցիչ և աշակերտ միջև):

– Ստեղծագործական երկխոսություն. Ուսուցիչը տալիս է միայն երկխոսության առաջին երկու ռեպլիկը, զույգերը պետք է զարգացնեն և ավարտեն երկխոսությունը:

– Երկխոսության հնարավոր շարունակությունների տարբերակները. Աշակերտներին առաջարկվում է երկխոսության տարբեր տեսակների համար ռեպլիկների հնարավոր տարբերակներ ընտրել և ցանկ կամ գծապատկեր կառուցել:

– Խառնված կամ մասնատված երկխոսություն: Աշակերտներին տրվում են խառնված ռեպլիկներով երկխոսություններ: Առաջարկվում է վերականգնել երկխոսության խառնված հերթականությունը:

– Երկխոսությունների կազմում.

. կարճ արարողակարգային (էթիկետային) երկխոսություն երկխոսություն,

. երկխոսություն–հարցում,

. երկխոսություն–մտքերի փոխանակում,

. երկխոսություն–հարցազրույց,

. երկխոսություն–քննարկում,

. երկխոսություն կազմել տրված տրամաբանական. Կառուցվածքային «կմախքի» կամ տրված «երկխոսական միավորների» հիման վրա:

Դերային խաղ

Հաղորդակցության՝ երկխոսության կարողությունների ձևավորման կարևոր գործոններից են խաղերը և հատկապես դերերով խաղերը, որոնք նպաստում են երեխաների ուսումնառության դրդապատճառների, ինչպես նաև ուսումնասիրող լեզվի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը: Ինչպես նշում է Դ.Էլկոնինը. «Խաղի կիրառումը դասի ժամանակ արդյունավետ է, երբ այն ընկալում է որպես ոչ միայն խաղ, այլև դաս՝ խաղի ձևով: Խաղային մեթոդը նոր հնարավորություններ է ընձեռնում երեխաների գործունեության կազմակերպման համար»: Մեթոդական գրականության մեջ դերային խաղը բնութագրում է որպես սովորողների անմիջական վարք և վերաբերմունք այլ մարդկանց նկատմամբ: Դերային խաղը յուրահատուկ մեթոդական հնար է, որի կիրառման ժամանակ սովորողը տրված իրադրությունում կարողանում է ազատ խոսել և հանդես գալ օտար լոգվով խոսող այլ անձի դերում:

Դ.Բ.Էլկոնին այս ասպարեզում կարևորում է չորս գործոններ. Խաղը որպես զարգացման մյջոց է ծառայում մտավոր գործողությունների, ճանաչողության, դրդապատճառների և անկաշկանդ վարքի դրսևորման համար:

Խաղի միջոցով հատկապես երեխաները ստանձնում են հասարակական դերեր և յուրացնում վարքի կանոններ: Խաղը սովորեցնում է, փոխում, դաստիարակում և, ինչպես Վիգոտսկին է ճշում «Իր հետևից տանում է անհատի զարգացումը»:

Խաղի կարևոր գործառույթներից մեկն էլ խնդրահարույց իրադրության լուծումն է: Դա նպաստում է ասելիքի պատճառաբանվածության ապահովմանը: Խթանում է սովորողների հաղորդակցական ակտիվությունը, ճնշադատական և վերլուծական մտածողությունը, փաստարկելու, խոսակցին համոզելու կարողությունները: Դերային խաղերը՝

– բարձրացնում են ուսման որակը և արդյունավետությունը,

– խթանում են սովորողների հետաքրքրությունը,

– օժանդակում են սովորողներին՝ հուշելով, թե տվյալ իրադրության մեջ ինչ խոսքային նմուշներ կարելի է գործածել այս կամ այն միտքն արտահայտելու համար,

– որոշակի հույզեր ու զգացումներ են արթնացնում, որոնք դրականորոն են ազդում ուսման որակի և արդյունավետության վրա:

Օ.Վ.Կալիմուլինայի կողմից մշակվել են դերային խաղերի որոշակի կանոններ, ըստ որոնց՝ սովորողը պետք է կարողանա.

– իրեն պատկերացնել այնպիսի իրադրություններում, ինչպիսիք հանդիպում են իրական կյանքում,

– տվյալ իրադրության մեջ հարմարվել իր դերին, ընդ որում՝ խաղալով իր կամ մեկ այլ անձի դեր:

Այսպիսով խաղի մասնակիցները պետք է իրենց դրսևորեն այնպես, ինչպես իրական կյանքում: Դերերը բաժանվում են հետևյալ տեսակների.

. բնական (որոնք բնութագրում են սեռը, տարիքը),

. վերագրված (ազգություն, պատկանելիություններ այս կամ այն սոցիալական խնբին),

. ձեռքբերովի (մասնավորապես՝ մասնագիտությունը),

. ըստ գործողությունների (օրինակ՝ այց բժշկին տվյալ պահին առաջարկել գործողությունների շարք):

Դերային խաղերի ժամանակ սովորողները, օգտագործելով յուրացված ռեպլիկները, արտահայտում են տարբեր զգացումներ՝ ուրախություն, տխրություն, հիացմունք:

Այսպիսով, դերային խաղերը նպաստում են այնպիսի կարևոր մեթոդական խնդիրների լուծմանը ինչպիսիք են.

. սովորողների շփվելու պատրաստակամությունը,

. լեզվական նյութի բամակի վերարտադրման բնական պահանջմունքը,

. վարժանքի համար հաղորդակցական իրադրությունները և համապատասխան պայմանները:

Ինչպես ցույց է տալիս դասավանդման փորձը, դերային խաղերի միջոցով սովորողները ձեռք են բերում նաև համագործակցային կարողություններ ու հմտություններ: Դերային խաղերը կարող են մշակվել և ներկայացվել նաև աշակերտներիկողմից, երբ նախօրոք տրվում են կիրառվող բառապաշարը և խոսքային նմուշները: Նման առաջադրանքների նպատակն է՝ խթանել ու զարգացնել երեխաների՝ պարզ իրադրություններում կարճ՝ 2-3 նախադասությամբ տեղեկատվություն ստանալու և հաղորդելու, զրույցին մասնակցելու կարողությունները: Դասագրքում տրված երկխոսություններն անգիր անելը և այնուհետև արտասանելը դեռևս դերային խաղ չի կարող լինել: Այստեղ պակասում է աշակերտի կողմից իմպրովիզացիայի հնարավորությունը, կողմնորոշումը, ինչպես նաև սովորողների միջև փաստացի փոխներգործությունը: Դերային խաղը սովորողներին ստիպում է մտնել երևակայական իրադրության մեջ և խաղալ իրենց կամ այլոց դերերը: Երբեմն սովորողներին տրվում են մանրամասն հրահանգներ: Հաճախ էլ հնարավորություն է ընձեռվում ըստ ցանկության ընտրել դերը:

Դերային խաղերին բնորոշ են.

. հաղորդակցությունը (շփում, համագործակցություն),

. հոգականությունը (դերային խաղերը նաև զվարճացնում են երեխաներին),

. սոցիալական համագործակցությունը (նպաստում են անձի սոցիալացմանը, նրան ընդգրկում հասարակական հարաբերությունների մեջ),

. ուսումնական գործընթացը ենթարկվում է խաղի կանոնների,

. ուսումնական նյութը դիտվում է որպես խաղի միջոց,

. խաղի կանոնները կարող են մշակվել նաև աշխատանքային խմբերում,

. փոխներգործությունը (ընկերներին, ծնողներին դերային խաղի իրենց տարբերակը ներկայացնելուց հետո երեխաները նրանցից ստանում են հետադարձ կապ, տեղեկություն, գնահատական՝ իրենց արածի մասին):

Դերային խաղը պահանջում է մանրակրկիտ պլանավորում, որն ընդգրկում է հետևյալ անհրաժեշտ փուլերը.

Դերային խաղերի իրականացման փուլերը

1բ. Կարճ ցուցադրում	1ա. Լեզվական նյութի նախնակա իրականացում
1գ. Նույն դերն ունեցողներ՝ նախապատրաստում	2. Դերերի իրականացում զույգերով/խմբերով՝ լսելի առաջադրանքներ, դերերի ուսուցչի հսկողության միջամտությամբ պարզաբանում/բացատրություն

2ա. Իրականացման շարունակություն
2բ. Լրացուցիչ աշխատանք նրանց համար, ովքեր շուտ են ավարտել
3. Իրականացման վերլուծություն – ինքնագնահատում – դիտողություններ սովորողների հետո.
5. Առաջադրանքներ երկխոսություն–ներից/խաղից – տեքստերի ստեղծում –աշխատանք լեզվական սխալների շուրջ
2գ. Ներկայացում հանդիսատեսի համար
4. Գործունեության գնահատում սովորողների կողմից

Դերային խաղերի իրականացման ժամանակ պետք է առանձնացնել նաև «դիտորդների» մի խումբ, որը կզբաղվի իրականացված գործունեության վերլուծությամբ և գնահատմամբ:

Դերային խաղերին տրամադրված հիմնական ժամանակը պետք է հատկացնել բուն առաջադրանքի կատարմանը և հետագայում դրա վերլուծությանը: Վերլուծություն կատարում է ուսուցիչը՝ աշակերտների հետ միասին, դասարանում: Դրան պետք է հատկացնել բավականին ժամանակ և անդրադառնալ հետևյալ հարցերին.

– Ինչ՞ տպավորություն ունեն իրենց և մյուսների դերակատարումների վերաբերյալ:

– Դերը հե՞շտ էր, թե՞ դժվար (լավ/վատ, հետաքրքիր/անհետաքրքիր և այլն):

– Որքանո՞վ էին արդյունավետ գործադրված ջանքերը, հաղորդակցական ռազմավարությունների կիրառումը, հասկացությունների և կիրառվող ձևերի ճշտությունը:

– Որքանո՞վ էր գործունեությունը համապատասխանում յուրացված նյութին կիրառելի՞ է, արդյոք, այլ համատեքստում:

– Ինչպիսի՞ն էր սովորողների փոխգործունեության որակը:

– Ինչպիսի՞ն էր դասավանդողի միջամտությունը (ե՞րբ, ինչու՞, ինչպե՞ս):

Դերային խաղի համար կարելի է ժամանակ տրամադրել կամ պահանջել անմիջապես իրականացնել այն:

Դերային խաղերով աշխատանքը նպատակահարմար է սկսել կարճատև առաջադրանքներից՝ տալով մանրամասն ցուցումներ, որոնք խթանում են երեխաների ակտիվությունը. Հարցնել միմյանց անունը, բնակության վայրը, տարիքը և այլն:

Օտար լեզուների դասավանդումը տարրական դասարաններում ավելի արդյունավետ կլինի, եթե ընթանա բազմատեսակ գործողությունների ընտրությամբ, որոնք հնարավորություն են տալիս սովորողին դրսևորել իր կարողություններն ու հմտությունները. «սովորել խաղով», լսել, խոսել, գրել, կամ «սովորել գործելով, որևէ բան անելով»:

Դերային խաղերը պետք է դառնան ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասը, քանի որ դրանք խթանում են երեխաների ուսումնական դրդապատճառները: Դերային խաղերի հաճախակի և հետևողական կազմակերպումը աշխուժանում է դասավանդման գործընթացը և մեծացնում դրա արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով բանավոր խոսքը մարդու մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Այն պետք է լինի հստակ, անաղարտ: Լեզուն և մտածողությունը գտնվում են սերտ փոխկապակցության մեջ: Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Բանավոր խոսքի մշակումը պարտադիր գործընթաց է: Սահուն, իմաստալից խոսքը կազմակերպված մտքի արդյունք է:

Երկար տարիներ ուշադրություն եմ դարձրել, ուսումնասիրել երեխայի ուշադրության, հիշողության, երևակայության, ստեղծագործելու կարողության, հաղորդակցման կարողության, ակտիվության, ընկալման

զարգացման վրա դերախաղային գործունեության ազդեցությունը: Դերային խաղերի կիրառությունը զարգացնում է զարգացնում է երեխաների միջև միջանձնային հարաբերություններ: Ակտիվորեն զարգանում է երեխայի ստեղծագործելու ունակությունները և երևակայությունը: Դերային խաղը ձևավորում է նաև երեխայի անհատականությունը:

Բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև աշակերտների երևակայությունն ու ստեղծագործական միտքը խթանող աշխատանքները: Դասի մեթոդական կառույցում տրված հետաքրքիր հարցերը, առաջադրանքները առածներն ու ասացվածքները, խաչբառերն ու ու հանելուկները նոյնպես այդ հնարավորությունն են ընձեռում ցանկացած դասի ժամանակ:

Բանավոր խոսքը կարելի է զարգացնեն նաև խոսքի, երաժշտության և կերպարվեստի նմուշների համակցված օգտագործումը: Այն խորացնում է տպավորությունը, սրում զգացմունքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն. Երևան, 1967թ.

2. ՈՒշինսկի Կ.Պ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1959թ. էջ 636.

3. Գյուլամիրյան Ջ.Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարանում, Երևան, 1998թ.

4. Աբրահամյան Ս.Գ., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1973թ.

5. Էլկոնին Դ.Բ., Զարգացման հոգեբանություն.

6. Ժան Պիաժե, Երեխայի խոսք և մտածողություն, Մ., 1994թ.